Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

23 դեկտեմբերի 2010թ. N-

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող Վարդանանց 65 հասցեի մարզադաշտը, մարզադաշտի տոմսարկղը, կաթսայատունը, դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ համապատասխանաբար 55476.7քմ, 160.0քմ և 143.3 քմ մակերեսներով հողամասերը (այսուհետ՝ գույք) անհատույց օտարելու մասին, <<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միության 27.09.2010թ հ.Ֆ/1-188 գրությունը և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009թ դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Վարդանանց 65 հասցեի մարզադաշտը, մարզադաշտի տոմսարկղը, կաթսայատունը, դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ համապատասխանաբար 55476.7քմ, 160.0քմ և 143.3 քմ մակերեսներով հողամասերը սեփականության իրավունքով անհատույց /նվիրատվությամբ/ օտարել <<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ

ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Երևանի քաղաքապետարան է դիմել <<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միությունը Երևան համայնքի սեփականություն համարվող Վարդանանց 65 հասցեի մարզադաշտը անհատույց միությանը օտարելու խնդրանքով:

<<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միության կողմից 2006 թվականից սկսված նշված գույքը օգտագործվել է իր նպատակային նշանակությանը համապատասխան, կատարվել է անհրաժեշտ վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ: Էականորեն բարելավվել է գույքի, ինչպես նաև շրջակա միջավայրի ընդհանուր վիճակը: Գույքը միությանը անհատույց հանձնումով պայմաններ են ստեղծվում Հայաստանում ֆուտբոլի զարգացման գործընթացների, ինչպես նաև միջազգային ասպարեզում հայկական ֆուտբոլը պատշաճ ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկվում է Վարդանանց 65 հասցեի մարզադաշտը, մարզադաշտի տոմսարկղը, կաթսայատունը, դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ համապատասխանաբար 55476.7քմ, 160.0քմ և 143.3 քմ մակերեսներով հողամասերը անհատույց օտարել <<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> իրավաբանական անձանց միությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և (կամ) փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ